Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4059/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

20 փետրվարի 2023թ.

ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. հունվարի 25-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/6-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2023թ. հունվարի 4-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությունը 2023թ. փետրվարի 1-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. հունվարի 25-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/6-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2023թ. հունվարի 4-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Դատարանի (դատավոր Գ. Վարդանյան) 2023թ. փետրվարի 9-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:

Հայցադիմումի թերությունները վերացվել են և որոշումը ստանալուց հետո եռօրյա ժամկետում կրկին ներկայացվել է դատարան:

Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքեր չկան:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ԴԱՏԱՎՈՐ

Հետևաբար, հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2023թ. փետրվարի 1-ին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությունն ընդդեմ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ 2022թ. հունվարի 25-ին կնքված թիվ ՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-22/6-2 պայմանագիրը միակողմանի լուծելու մասին և «Վագա-Ֆարմ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում ներառելու մասին 2023թ. հունվարի 4-ի որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների մասին հայցադիմումն ընդունել վարույթ:

Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2023թ. փետրվարի 1-ին:

Թիվ ԵԴ/4059/02/23 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը կհրապարակվի 2023թ. ապրիլի 3-ին դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:

Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ